ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Կիևի Թորէն քահանայ Մնացականեանի անունով, որով համաձայն Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Առաջնորդի և Ծխականաց միջնորդութեան, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 22 Նոյեմբ. թ. 2538։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ

Սինօդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1916 թ. սեպտ. 17-ի, թ. 4049, յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ յիշեալ Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունելու Սուրմալուի գաւառի Նաջաֆալի գիւղի բնակիչ Թադէոս Տէր Յովհաննիսեանին և առաջադրել Երևանի փոխ-թեմակալին ձեռնադրել յիշեալ Տէր Յովհաննիսեանին քահանայ Նաջաֆալի գիւղի վերայ։ 28 Նոյեմբ., թ. 624։

Սինօդը՝ լսելով Վեհ. Կաթուղիկոսի 1916 թ. Նոյեմբերի 29-ի, թ. 2584 կոնդակը՝ «Ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն» տօնը դպրոցական տօնելի օրերի ցանկի մէջ մտցնելու մասին, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան կոնդակի դպրոցական օրերի ցուցակի մէջ մտցնել և ընծայումն Ս. Աստուածածնի ի տաճարն, որ տօնւում է Նոյեմբերի 21-ին, և ցուցակն ուղարկել Հայոց թեմակալ առաջնորդներին ի գործադրութիւն։ 12 դեկտ., թ. 645։

Սինօդը՝ լսելով Վեհ. Կաթուղիկոսի բանաւոր պատուէրը—Ներսէս վարդ. Տէր Միքայէլեանին 300 ռ. նպաստ տալու մասին, որոշեց. Նորին Սրբութեան պատուիրանի համաձայն պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ Տ. Ներսէս վարդապետին միանուագ նպաստ երեք հարիւր ռուբլի։ 14 դեկտ., թ. 653։

Սինօդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի 1916 թ. յունուարի 27-ի, թ. 404, յայտարարութիւնն, որոշեց.

թույլ տալ յիշեալ կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աւագ Տէր Ղևոնդեանին և յանձնարարել թեմի Առաջնորդին ձեռնադրել նորան քահանայ նիւզդեար զիւղի ծխականների համար կամովին հրաժարուած Մկրտիչ քահ. Տէր Ղևոնդեանի փոխարէն։ 14 դեկտ., թ. 651։

Մինչդէ՝ լսելով Նորին Սրբութեան 1916 թ. դեկտ. 12-ի, թ. 2736 կոնդակը, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան կարգադրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին փոխադրել Տփխիսի Ազգային Բիւրոյի փոխնախագահ պ. Ա. Խատիսեանին յօգուտ վիրաւորների ստացուած 5275 ռ. և պատերազմի դաշտում ընկած կամաւորների ընտանեաց՝ 22247 ռ. 85 կոպ., ընդամենը՝ 27522 ռ. 85 կոպ.։ 14 դեկ., թ. 649։

Մինչդէ՝ լսելով Նորին Վեհափառութեան 1916 թ. դեկտ. 8-ի, թ. 2696 մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան նախ՝ պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին փոխադրել դպրոցական ֆոնդի տոկոսներից Երևանի փոխ-թեմականին տարեկան 5000 ռ.՝ բաշխելու թեմի ազքատ դպրոցներին, և երկրորդ՝ յանձնարարել Երևանի նոյն փոխ-թեմականին հոգաբարձութիւնների պաշտօնական ստացագրերը, գրաճները ստանալու մասին, ուղարկել Նորին Սրբութեան Դիւանին Վեհափառ Հայրապետին զեկուցանելու համար։ 16 դեկտ., թ. 654։

Մինչդէ՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի միջնորդութիւնն, որոշեց. պատուիրել Վրաստանի Կոնսիստորիային կարգադրել մկրտել Խրիդոր Այդբերդին Հայաստանեայց եկեղեցու ծիսով։ 28 դեկտ., թ. 682։

Մինչդէ՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի 1916 թ. նոյեմբերի 7-ի, թ. 4896, յայտարարութիւնը, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Կոնսիստորիային կարգադրել մկրտել Հրէուհի Դվոյրա Գուլկոյին Հայաստանեայց եկեղեցու ծիսով։ 28 դեկտ., թ. 680։

Մինչդէ՝ լսելով Նորին Սրբութեան 1916 թ. դեկտ. 22-ի,

թ. 2947, մակագրությունը, որոշեց. համաձայն նորին Վեհափառության մակագրության պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ ճեմարանի վարչության գաղթականական գումարից վեց հազար ռուբլի՝ ճեմարանում 20 հոգի տաճկահայ որբեր պահելու ծախս։ 23 դեկտ. թ. 671։

Սինոդը՝ լսելով Ատրպատականի Կոնսիստորիայի 1916 թ. յուլիսի 9-ի, թ. 2205 յայտարարությունն, որոշեց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի պատուիրանի, պատուիրել Ատրպատականի թեմական Առաջնորդին ձեռնադրել Զահրնկալ Հայրապետ Այվազեանին քահանայ Եղեսիայի ծխականների համար։ 23 դեկտ., թ. 672։

Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի մակագրությունը—հիւբրնկալ Եղիշէ վարդապետի ռոճկի մասին, որոշեց. պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ հիւբրնկալ Եղիշէ վարդապետին յաւելեալ ռոճիկ ամսական տասն ռ., սկսած 1916 թ. դեկտեմբերի մէկից։ 30 դեկտ., թ. 691։

Սինոդը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի Կոնսիստորիայի 1916 թ. յունիսի 24-ի, թ. 1263, յայտարարությունն, որոշեց. թոյլ տալ յիշեալ Կոնսիստորիային ընդունել Միքայէլ Խանդամիրեանին հոգևոր կոչման մէջ իբրև շտատնի դպիր Տագանրոգի Ս. Յակոբ եկեղեցու համար։ 30 դեկտ., թ. 692։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի 1916 թ. հոկտ. 31-ի, թ. 4797, յայտարարությունը, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Յարութիւն Ղարիբեանին և յանձնարարել թեմի Առաջնորդին ձեռնադրել նորան սարկաւագ Գորու Ս. Ստեփաննոս եկեղեցու վրայ։ 30 դեկտ., թ. 694։